



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

21.05.2013թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԴԱՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ շրջանավարտներ

Շնորհավորում եմ բոլորիդ այս հիշարժան օրվա կապակցությամբ և մաղթում, որ դպրոցական տարիներին ձեռք բերված գիտելիքները նպաստեն մեծ կյանքում՝ Ձեր կայացմանն ու առաջընթացին:

Մերօրյա իրականությունը պարտավորեցնում է, որպեսզի Դուք ճիշտ կողմնորոշվեք մասնագիտությունների ընտրության և հետագա ուսումնառության հարցերում, քանի որ մեր երկրի տնտեսությունը լավ մասնագետների կարիք իսկապես ունի:

Օգտվելով այս գեղեցիկ օրվա ընձեռած հնարավորությունից՝ ցանկանում եմ շնորհավորել մեր մանկավարժներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել Ձեր ճիշտ դաստիարակության, հայրենասիրական գաղափարներ սերմանելու, ինչպես նաև անսպառ գիտելիքների մատուցման գործում:

Համոզված եմ, որ տարիներ հետո կարոտով եք հիշելու դպրոցական տարիները, որոնք անփոխարինելի ու անկրկնելի են մարդկային կենսագրության էջերում:

Ցանկանում եմ, որ յուրաքանչյուրդ հասնեք Ձեր երազած բարձունքներին՝ դառնաք արժանի գավակը հայ ժողովրդի:

Ձեր կյանքի այս նշանակալի օրվա կապակցությամբ ևս մեկ անգամ շնորհավորում եմ և ցանկանում, որ այսօրվա բարձր և տոնական տրամադրությունը դառնա յուրաքանչյուրիդ մշտաբերուն ուղեկիցը:

Հարգանքներով


Կ.ՇԱՀԳԱԼ ԴՅԱՆ